

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ
«ԻՆՋԵՆԵՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՍԱՄՆԱՃՅՈՒՂ



ЗАО << ГАЗПРОМ АРМЕНИЯ >>
ФИЛИАЛ
<<ИНЖЕНЕРНЫЙ ЦЕНТР>>

ՆԱԽԱԳԾԱ-ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ


Պետական լիցենզիա № 7850

Պետական լիցենզիա № 14832

*Տալուշի մարզի Խաշթառակ գյուղի
հարակից տարածքով անցնող
Բենտոնիտի ԳԲԿ-ից Իջևանը սնող մ/ճ
ա/գ զազատարի վթարային հատվածի
վերատեղադրում*

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

ՕԲՅԵԿՏ № 16/017-15



ՆՀԲ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱՆ՝

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԳԼԽ. ՍԱՄՆԱԳԵՏ՝

Ժ. ՎԱՐԴԻԿՅԱՆ

ՃԱՐՏԱՐԱԳԵՏ՝

Ս. ՇԱՄԻԼՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2016թ.

ՆԱԽԱԳԾԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ 18.09.2015թ. № 05-34/4403 գրություն
2. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ 16.09.2015թ. տեխնիկական առաջադրանք
3. Տավուշի ԳԳՄ 10.09.2015թ. տեխնիկական պայմաններ
4. ԳԷՔՊ բաժնի ԳԿՎ հետազոտման և ախտորոշման ծառայության եզրակացություն

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՄԱՍ

1. Բացատրագիր
2. Կիրառում
3. Ինժեներա-երկրաբանական եզրակացություն

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԾԱԳՐԵՐ

1. Գազատարի հատակագիծ Մ1:1000
2. Երկայնական կտրվածք
3. Շարժական հենասյուն

Աշխատանքի ծավալ 2 թերթ



Signature

«ԳԱԶՊՐՈՄ» ԲԲԸ
 «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ»
 ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
 («Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ)
**ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ
 ՏԵՂԱԿԱԼ**
 0091, ԳՅ, Երևան, Թբիլիսյան խճուղի 43
 Դեռ: (37410) 294-728, 294-933: Ֆաքս (37410) 294-728
 Էլ. փոստ՝ inbox@gazpromarmenia.am

ОАО «ГАЗПРОМ»
 ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО
 «ГАЗПРОМ АРМЕНИЯ»
 (ЗАО «Газпром Армения»)
**ЗАМЕСТИТЕЛЬ
 ГЕНЕРАЛЬНОГО ДИРЕКТОРА**
 0091, РА, Ереван, Тбилисское шоссе, 43
 Тел.: (37410) 294-728, 294-933. Факс: (37410) 294-728
 Эл. почта: inbox@gazpromarmenia.am

18» 09 201 5թ

№ 06 - 34 / 440

Պատճեն

«Ինժեներական կենտրոն»
 մասնաճյուղի տնօրեն՝
 պրն. Ռ. Նազարյանին

Տավուշի ԳԳՄ-ի տնօրեն՝
 պրն. Ս. Խառատյանին

ՆՆՓ կազմելու մասին.


Խնդրում եմ Ձեզ սահմանված կարգով կազմել՝ Իջևան ք. Կայարանի թևը սնող և Խաշթարակ գյուղի հարակից տարածքով անցնող Բենտոնիտի ԳԲԿ-ից Իջևան քաղաքը սնող մ/ճ ստորգետնյա գազատարների վթարային հատվածների վերատեղադրման աշխատանքների մախագծա - մախահաշվային փաստաթղթերը:

Հիմք՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Գլխավոր տնօրենի տեղակալ-Գլխավոր ճարտարագետ Հ. Թադևոսյանի 17.09.2015թ.թիվ /86645/ ծառայողական գրությունը:
 Առդիր՝ Տեխնիկական առաջադրանքները, տեխնիկական պայմանները և գազատարների կոռոզիոն վիճակի հետազոտման եզրակացությունը 5 թերթից:

Signature

Ա. Գևորգյան

Կատ. Ռ. Բալայան՝
 29-47-26




«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրենի տեղակալ՝
Այարոն Ա. Գևորգյանին

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆ


Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պատվիրման նպատակով տրամադրվում է Իջևան քաղաքի Կայարանի թեղ սնող և Խաչքառակ գյուղի հարակից տարածքով անցնող Բենտոնիտի ԳԲԿ-ից Իջևան քաղաքը սնող միջին ճնշման ստորգետնյա գազատարների վթարային հատվածների վերատեղադրման տեխնիկական առաջադրանքները:

Առդիր՝ տեխնիկական առաջադրանքները, «Ինժեներական կենտրոն» մասնաճյուղի 14.08.2015թ. No 01-15/556 գրությամբ ներկայացված եզրակացությունը և Տավուշի ԳԳՄ 11.09.2015թ. No 652 գրությամբ ներկայացված տեխնիկական պայմանները - 10 թերթով

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրենի տեղակալ-
Գլխավոր ծարտարագետ՝



Դ. Թադևոսյան



Տ. Ա. Գևորգյան

Հաստատում եմ՝
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրենի տեղակալ-
Գլխավոր ծախսարագետ՝


Գ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

«16...»09..... 2015 թ.

ռաբաժրում ԳԲ համակարգի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի
կազմման տեխնիկական առաքադրանք

ի անվանումը (հասցեն)՝ Խաչթառակ գյուղի հարակից տարածքով անցնող Բենտոնիտի
ԳԲԿ-ից Իջևանը սնող միջին ճնշման ստորգետնյա գազատարի
վթարային հատվածի վերատեղադրում

ովող աշխատանքներ՝ D=820մմ ստորգետնյա գազատարի վթարային հատվածի
վերատեղադրում՝ ըստ նախագծային լուծման


մն կետի տեղակապումը և պարամետրերը՝ Համաձայն տեխնիկական պայմանների

նարարականներ Վերատեղադրվող հատվածի տրամագծի ընտրությունը՝
ըստ հիդրավիկական հաշվարկի

լրանքի հիմքը՝ «Ինժեներական կենտրոն» մասնաճյուղի 14.08.2015թ. No 01-15/556
գրությամբ ներկայացված եզրակացությունը
Տավուշի ԳԳՄ 11.09.2015թ. No 652 գրությամբ ներկայացված
տեխնիկական պայմանները


«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ

Ց և ՆԳՅ Շ ու Ս բաժնի պետ՝




Յու. Նազարյան

Կազմեց՝



Թ. Ղազարյան




Հավելված 1
Հաստատում են
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ
Ս.Խառատյան
09 2015 թ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Տավուշի մարզի Դեղեռն քաղաքի (գյուղի) Դեղեռն - Դեղեռն ավտոճանապարհի (փողոցի)
գազամատակարարման վերականգնման (և կամ գազիֆիկացման)

- 1 Գազի օրեկան մ³ ծամային ծախսով համարավոր է միացնել
- 2 Գազ ուղեղ $d = 219.55$ $L \approx 100$ գ.մ 5/ժ
վերջերից գազատար
(Նախագծող, կառուցվող, հորձող գազատարի անվանումը, տրամագիծը, հզորությունը, տեղակայման տարբերակը)
- 3 Միացվող գազատարում գազի ճնշումը մթ.մ. (3.5 և 4.5)
- 4 Միացման կետը Պ40+00 - 14 Պ41+00
(Նշել միացման տեղի հասցեն, տեղակայումը և պիկետը)
- 5 Լրացուցիչ պահանջներ չկա
(Հիդրավիկական վերահաշվարկի կատարման անհրաժեշտությունը)
գ.մ. հարվիչ առկա է չէ 5.25-ն առկա է
(Գլխամուկային հաշվիչ-հանգույցի տեղադրում, Լ-ՊԷ, ԳԿԼ մախատեսում և այլն)
- 6 Օբյեկտի գազամատակարարման վերականգնման (և կամ գազիֆիկացման) գծապատկերը
Ծանոթություն. - գծապատկերը կարող է կցվել առանձին քերթով



Տեխնիկական պայմանները կազմված են «10» 09 2015թ.

և գործում են մինչև «25» 12 2015թ.

Գ.Գ.Մ. Խոնորենի տեղակալ տեխ. գծով

Գ.Գ.Մ. ՇՏԲ պետ

[Signature]
[Signature]

Պ.Բաղդասարյան

Կ.Ենգիբարյան

Եզրակացություն



Համաձայն "Գազպրոմ Արմենիա" ՓԲԸ 61/[83373]-15 06.08.2015թ. և Տավուշի ԳԳՄ № 08/59 06.08.2015թ. գրությունների, 2015թ. հուլիսի 8-ին ԳԵՔՊ բաժնի ԳԿՎ հետազոտման և ախտորոշման ծառայության կողմից կատարվել է հետազոտում Տավուշի ԳԳՄ-ի սպասարկման տարածքի, Խաշթառակ գյուղի տակով անցնող մ/ճ ս/գ D- 820 մմ և Կայարանի թևի մ/ճ ս/գ D- 720 մմ գազատարների վթարված հատվածների հետազոտում:

1. Խաշթառակ գյուղի տակով անցնող մ/ճ ս/գ D- 820 մմ (Ֆոտո № 1,2,3)

Վթարված տեղում ԳԳՄ-ի կողմից բացվել է 5 մ երկարությամբ հոր:
Հորում կատարվել է կոնտակտային տեսազննման աշխատանքներ:
Խողովակի պատի հաստությունը կազմում է 9.2 մմ:
"Գազատար-հող" պոտենցիալը կազմում է -0.61 Վ: Չափման արդյունքում թափառող հոսանքներ չեն հայտնաբերվել:
Մետաղի կարծրությունը՝ 270 HB, որը ցույց է տալիս խողովակի լարված վիճակը:
Խողովակի լարված վիճակի պատճառով առաջացել են ներձավածքներ մինչև 40.0 մմ խորությամբ: Ներձավածքը գտնվում է 2 խողովակների գոդակարի վրա:
Ներձավածքի վրա խողովակը ճաքել է մոտ 10 սմ երկարությամբ, որը վերացվել է ԳԳՄ-ի կողմից գողման միջոցով: 2012 թ. նույն տիպի վթար է տեղի ունեցել նույն տեղում: Համաձայն ԳԳՄ-ի տվյալների ներձավածքների խորությունը աճել է:
Խողովակի լարվածությունը վերացնելու համար առաջարկվում է խողովակի փոխարինում 15 մ երկարությամբ (± 7.5 մ գոդակարից):

2. Կայարանի թևի մ/ճ ս/գ D- 720 մմ (Ֆոտո № 4,5)

Վթարված տեղում ԳԳՄ-ի կողմից բացվել է մոտ 15 մ երկարությամբ հոր:
Հորում կատարվել է կոնտակտային տեսազննման աշխատանքներ:
Խողովակի պատի հաստությունը կազմում է 8.6 մմ:
Գրունտի տեսակարար դիմադրությունը կազմում է 37 Օմ x մ, օժտված է "միջին" կոռոզիոն ակտիվությամբ:
Մետաղի կարծրությունը կազմում է 125 HB:
Խողովակի վրա հայտնաբերվել է կոռոզիոն անցք:
Բացի կոռոզիոն անցքից հայտնաբերվել են բազմաթիվ խոռոչներ 6.5-7.5 մմ խորությամբ (75.6- 87.3 % խողովակի պատի հաստության): Հիմնականում խոռոչները գտնվում են մեկուսիչ ծածկույթի տակ (подпленочная коррозия) և դրանց հայտնաբերելը սովորական մեթոդներով հնարավոր չէ:
ԳԳՄ-ի կողմից կատարվել է շրջանցող զիծ D-219 մմ և 21 մ երկարությամբ: Հաշվի առնելով, որ վթարված տեղից գազատարը մոտ 100 մ գտնվում է հոսող հողերում և մեկուսիչ ծածկույթի վերանորոգման աշխատանքների իրականացնումն անհնարին է, առաջարկվում է շրջանցող զիծը երկարացնել մինչև 100 մ:

ԳԿՎ Ա և Հ ծառայության գլխավոր մասնագետ  Կ. Ջավադյան
ԳԿՎ Ա և Հ ծառայության ճարտարագետ  Ս. Հարությունյան

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Սույն աշխատանքային նախագիծը կազմված է համաձայն՝

1. «Գազալարում Արմենիա» ՓԲԸ 18.09.2015թ. № 05-34/4403 գրության ,
2. «Գազալարում Արմենիա» ՓԲԸ 16.09.2015թ. տեխնիկական առաջադրանքի ,
3. Տավուշի ԳԳՄ 10.09.2015թ. տեխնիկական պայմանների ,
4. ԳԷՔՊ բաժնի ԳԿՎ հետազոտման և ախտորոշման ծառայության եզրակացության:

Նախագծով կազմվել է Տավուշի մարզի Խաշթառակ գյուղի հարակից տարածքով անցնող Բենտոնիտի ԳԲԿ-ից Իջևանը սնող մ/ճ ս/գ գազատարի վթարային հատվածի վերատեղադրման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:

Գազատարների տեղադրումը և կառուցվածքը

Նախագծվող վերգետնյա գազատարի մոնտաժումն իրականացվում է պողպատյա ուղղակար էլեկտրաեռակցված խողովակներից՝ համաձայն ԳՕՍՏ 10704-91, մետաղական հենասյուների վրա H=1.0-3.0մ բարձրությամբ: Ավտոմոբիլային ճանապարհը հատելիս ապահովել H=5.0 մ բարձրություն: Ճանապարհների հատման տեղերում նախատեսված է ս/գ գազատարը անցկացնել պողպատյա պատյանի միջով ստուգիչ խողովակով:

Պողպատյա գազատարների և ձևավոր մասերի միացումները նախատեսված են էլեկտրաաղեղնավոր կամ գազային եռակցմամբ: Գազատարի վերգետնյա հատվածները պետք է պատվեն նախաներկով, այնուհետև յուղաներկվեն 2 շերտով:

Գազատարները տեղադրումից հետո ենթակա են փչամաքրման և փորձարկման:

Նախագծում «Ելք հողից» և «Մուտք հող» կետերում նախատեսվում է տեղադրել պաշտպանիչ պատյան՝ գազատարը մեխանիկական վնասվածքներից պաշտպանելու նպատակով:

Խողովակների տրամագծերը որոշվել են հիդրավլիկական հաշվարկով գազի անհրաժեշտ ծախսերի հիման վրա:

Գազատարների փորձարկումը

Շինարարության ավարտից հետո պետք է կատարվեն գազատարների կիպության փորձարկում օդով:

Կիպության փորձարկումը կատարվում է գազատարի մեջ սեղմված օդի մատուցմամբ, որի ճնշումը հասցվում է փորձարկման ճնշմանը:

Վերգետնյա պողպատյա գազատարների փորձարկման նորմաները ընդունել համաձայն ՀՀՇՆ-IV 12.03.01-04-ի աղյուսակ-1-ին(табллица-1) համապատասխան:

Փորձարկման ընթացքում հայտնաբերված արատները պետք է վերացվեն գազատարում ճնշումը մինչև մթնոլորտայինի իջեցնելուց հետո:

Արատները վերացնելուց հետո գազատարի կիպության փորձարկումը պետք է կրկնվի:

Բոլոր եռակցակարերը, որոնք կատարվել են փորձարկումներից հետո, պետք է ստուգվեն ֆիզիկական մեթոդով:

Եզրակացություն

Նախագիծը մշակված է համաձայն գործող ՀՀՇՆ-12.03.01-04 «Գազաբաշխիչ համակարգեր» ՇՆՁ IV 12.101-04 պահանջների և «Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում» տեխնիկական կանոնակարգի պահանջների:

Աշխատանքները սկսելուց առաջ պետք է նշանակվի տեխնիկական հսկողության ներկայացուցիչ պատվիրատուի կողմից:

Աշխատանքները սկսելուց առաջ պետք է նշահարվի գազատարի ուղեգիծը նախագծի հեղինակի ներկայությամբ:

Նախագծից բոլոր շեղումները պետք է համաձայնեցվեն պատվիրատուի, շահագործող կազմակերպության և նախագծի հեղինակի հետ:

Կազմեց

Մ. Շամիլյան

Շրջակա միջավայրի պահպանության միջոցառումները

Նախագծով ընդունված բոլոր տեխնիկական որոշումները բացառում են շրջակա միջավայրի աղտոտումը գազատարների նորմալ շահագործման պայմաններում: Շրջակա միջավայրի աղտոտումը հնարավոր է միայն վթարների ժամանակ: Վթարները բացառելու համար գազատարը ենթարկվում է փորձարկման համաձայն ՀՀՇՆ -IV 12.03.01-04 <<Գազաբաշխիչ համակարգեր>> և ՇՆՁ IV 12.101-04: Խողովակների միացման մասերում քայքայումը կանխելու համար նախատեսվում է եռակցակարերի ստուգում ֆիզիկական մեթոդներով:

Բնության պահպանության նպատակով անհրաժեշտ է պահպանել հետևյալ պայմանները

- շինարարության համար հատկացված տարածքի սահմանների պարտադիր պահպանություն
- շին. հրապարակի աշխատանքային տեղերի կենցաղային և շինարարական թափոնների համար բեռնարկներով հագեցվածություն
- դյուրավառ և քսայուղերի դատարկումը միայն հատուկ առանձնացված տեղերում:

Կ Ի Ր Ա Ռ Ո Ւ Մ

I. Նախագծային աշխատանքներ.

Նախագիծը կազմվել է համաձայն ՀՀ-ում գործող նորմերի և կանոնների՝ ՀՀՇՆ-IV-12.03.01-04, լիցենզիա № 7850 էներգետիկ ոլորտի:

II. Նախահաշիվ. (տես նախագծի «նախահաշիվ» մասում)

III. Կապալի օբյեկտի առանձին մասերի կոնստրուկցիաներին և օգտագործվող նյութերին ներկայացվող պահանջները.

Բոլոր օգտագործվող նյութերը պետք է համապատասխանեն արտադրողի կողմից տրամադրված որակի չափանիշներին (սերտեֆեկատի պայմաններին):

IV. Կապալի աշխատանքի կատարման համար պահանջվող լիցենզիային, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները.

ա/ կապալառուն տվյալ օբյեկտի աշխատանքները կատարելու համար պետք է ունենա քաղաքաշինության բնագավառի էներգետիկ լիցենզիա

բ/ մոնտաժային աշխատանքների համար անհրաժեշտ գործիքներ

գ/ տվյալ աշխատանքները կատարելու համար կապալառուն պետք է ունենա գազաեռակցող և փականագործ

դ/ գազաեռակցողը պետք է ունենա ոչ պակաս 5 տարվա աշխատանքային փորձ, փականագործը պետք է ունենա ոչ պակաս 3 տարվա աշխատանքային փորձ

V. Առաջարկություններ.

ա/ կապալի օբյեկտի շինարարության ավարտից հետո շին մոնտաժային աշխատանքների որակի երաշխիքային ժամկետ է սահմանված 3 տարի

բ/ պատվիրատուն շին. մոնտաժային աշխատանքների իրականացման ընթացքում պետք է իրականացնի մշտական տեխնիկական հսկողություն, դրանց արդյունքները գրանցելով շինարարության վարման մատյանում և ձևակերպելով համապատասխան ակտերով

գ/ շին. մոնտաժային աշխատանքների սկսման պահից մինչև ավարտը պատվիրատուն, նախագծային կազմակերպության միջոցով, պետք է իրականացնի հեղինակային հսկողություն:

Պարբերականությունը և ժամկետները սահմանվում են պատվիրատուի և նախագծային կազմակերպության միջև կնքված պայմանագրով:

Տավուշի մարզի Խաշթառակ գյուղի հարակից տարածքով անցնող
Բենտոնիտի ԳԲԿ-ից Իջևանը սնող մ/ճ ստորգետնյա գազատարի վթարային
հատվածի վերատեղադրում

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Տեղամասի ինժեներա-երկրաբանական պայմանների մասին

1. Հետազոտվող տարածքը գտնվում է Խաշթառակ գյուղի հարավ-արևմտյան հարակից տարածքում: Տեղանքը թեք է՝ $10-15^{\circ}$, և ուղղված է դեպի հարավ-արևմուտք: Ուղեգծի բացարձակ նիշը կազմում է 642,0մ : Վերատեղադրվող հատվածի երկարությունը կազմում է 104,0մ:

2. Կլիմայական տեսակետից տարածքը գտնվում է ՀՀ «տաք» գոտում: Օդի ջեմաստիճանը տատանվում է $-19^{\circ}\text{C} +39^{\circ}\text{C}$ սահմաններում: Տարեկան մթնոլորտային տեղումները կազմում են 590 մմ: Ձմռան ընթացքում ձյան ծածկույթի ամենաբարձր մակարդակը, 10 օրվա ընթացքում, կազմում է 42սմ, որի քաշը կազմում է 50,0կգ/մ³: Ձմռանը գերակշռում են հարավային, ամռանը՝ հյուսիսային ուղղության քամիները:

Գրունտի սառեցման խորությունը կազմում է 35 սմ:

3.Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքը գտնվում է լեռնային գոտում, որոնց հարաբերական բարձրությունը այստեղ կազմում է 300-650մ: Վերատեղադրվող հատվածի տարածքը գտնվում է դելյուվիալ-ակումուլյատիվ գոտում:

4. Երկրաբանական տեսակետից տարածքը գտնվում է կավճի նստվածքային շերտախմբի վրա, ներկայացված կրաքարային, ավազաքարային և գրաուվաակային ապառներով:

5. Ուղեգծի գրունտները ներկայացված են հետևյալ տարատեսակներով:

0.0-0.2-հողաբուսական ծածկույթ

0.2-1.3-կավավազ սև, օրգանական մնացորդի պարունակությամբ, պինդ թանձրության և ցածր խտության:

1.3-1.8-խիճ կրաքարից, միջին և խոշոր, կավավազային լցանյութով՝ 20-25%: Վերջինս պինդ թանձրության է: Մինչև 1,8մ խորության գրունտային ջրեր չեն հայտնաբերվել:

Գրունտի մշակման կարգը, ըստ СНиП –IV –II -82, Ժող- 1, աղ. 1, հետևյալն է.


- Հողաբուսական ծածկույթ -9 - 6
- Կավավազ -34 - 6
- Խիճ -13-6

Ինժեներ- երկրաբան

Ս. Սկրտչյան

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

- 1. Գազատարի մոնտաժումը և փորձարկումն իրականացնել համաձայն ՀՀՇՆ IV-12.03.01-04 պահանջների:
- 2. Մոնտաժային աշխատանքների ժամանակ այլ կոմունիկացիաների ի հայտ գալու դեպքում, որոնք նախագծում նշված չեն, հարկավոր է անհապաղ կանգնեցնել աշխատանքները և տեղյակ պահել շահագործող կազմակերպության աշխատակիցներին:
- 3. Նախագծվող վերգետնյա Մ/Ճ գազատարը տեղադրվում է H=1.0 ÷5.0 մ բարձրության վրա:
- 4. Միացումը իրականացնել գազային տնտեսության շահագործման ծառայության աշխատակիցների ներկայությամբ:



«Գազպրոմ Արմենիա»ՓԲԸ
ԳԲՑ և ՆԳՀ Շ ու Մ բաժին

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է

[Signature]

Ա. Խաչատրյան

21.04.2016թ.

Տավուշի ԳԳՄ
փոխտնօրեն,զլխ. ճարտարագետ



ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է

[Signature]

Պ. Բաղմանյան

15.04.16թ.

Խաշթառակ համայնքի
ղեկավար



ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է

[Signature]


Ա. Վիրաբյան

14.04.2016թ.


Պայմանական նշաններ


- Գործող մ/ճ ս/գ գազատար
- Նախագծվող մ/ճ վ/գ գազատար
- Խիտ թփեր
- Առանձին կանգնած տերևոտ ծառեր

Պետի տեղ.	Ա. Վարդանյան			ՕԲՅԵԿՏ №16/017-15			
Գլխ. մասն.	Ժ. Վարդիկյան			Տավուշի մարզի Խաշթառակ գյուղի հարակից տարածքով անցնող Բենտոնիտի ԳԲԿ-ից Իջևանը սնող մ/ճ ս/գ գազատարի վթարային հատվածի վերատեղադրում			
Նախագծող	Մ. Շամիլյան						
Չափագրող	Ա. Սարգսյան			Մ/ճ գազատար	Փուլ	Թերթ	Թերթեր
					ԱՆ	1	3
Պաշտոն	ԱԱՀ	Ստորագ.		Գազատարի հատակագիծ Մ1:1000	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ինժեներական կենտրոն» մասնաճյուղ		
			2015թ.				



Ինժեներա-երկրաբանական բնութագիր
Փաստացի հողի նիշը, մ
Գազատարի ներքևի նիշը, մ
Հենասյան բարձրությունը, մ
Գազատարի տեսակը և մեկուսացման տիպը
<div> <div>թեքություն %</div> <div>Հեռավորություն, մ</div> </div>
Հեռավորություն, մ
Ցցանշում
Գազատարի հատակագիծ

[illegible]



Աղյուսակ 1

H	d	250	125	100	80	70	50
5.0	a	1000					
	b	1100					
4.5	a						
	b						
4.0	a						
	b						
3.5	a						
	b						
3.0	a	700					
	b	800					
2.5	a						
	b						
2.2	a						
	b						
2.0	a	500					
	b	600					
1.5	a	500					
	b	600					
1.0	a	500					
	b	600					

Պետի տեղ.	Ա. Վարդանյան			ՕԲՅԵԿՏ N°16/017-15		
Գլխ.մասն.	Ժ. Վարդիկյան					
Նախագծող	Մ. Շամիլյան			Տավուշի մարզի խաշթառակ գյուղի հարակից տարածքով անցնող Բենտոնիտի ԳԲԿ-ի Իջևանը սնող մ/ճ ս/գ գազատարի վթարային հատվածի վերատեղադրում		
				Մ/ճ գազատար	Փուլ	Թերթ
					ԱՆ	3
Պաշտոն	ԱԱՀ	Ստորագ.		Շարժական հենասյուն	«Գազարոմ Արմենիա» ՓԲԸ «Ինժեներական կենտրոն» մասնաճյուղ	
			2015թ.			

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐ

ՀՀ	Աշխատանքի անվանումը	Չափ. միավ.	Քանակ	Ծանոթ
1	Փոսերի քանդում ձեռքով մետաղական հենասյուների համար I կարգի գրունտում IV կարգի գրունտում	մ ³	0.6 1.5	
2	Ավելացած գրունտի բեռնում և տեղափոխում բեռնատար ավտոմեքենայով 1 կմ	մ ³ /տ	2.1/3.2	
3	Բետոնից հիմքեր M150	մ ³	2.1	
4	Մետաղական հենասյուներ գազատարի տակ 1 խողովակի համար Ø 273x5.0 h=5.0 (6.0) h=3.0(3.6) h=2.0(2.5) h=1.5(2.0) h=1.0(1.5)	հատ/կգ	2/400 1/100 2/170 1/60 4/200	
5	Կիսախողովակների տեղադրում գազախողովակի տակ	հատ/կգ	10/49	
6	Պարոնիտ	հատ/կգ	10/10	
7	Մետաղական շինվածք (թիթեղ)	հատ/կգ	10/20	
8	Հենասյուների ներկում 2 անգամ Գրունտ ԴՓ-02 Յուղաներկ	մ ² մ ²	17 17	ԳՕՍՍ 25129-82 ԳՕՍՍ 8292-85
9	Գազատար խողովակի տեղադրում խրամուղում PAM տեսակի մեկուսացումով Ø325x6մմ	մ	3	ԳՕՍՍ 10704-91
10	Գազատար խողովակի վերգետնյա տեղադրում հենասյուների վրա Ø325x6.0մմ	մ	110	ԳՕՍՍ 10704-91
11	Ø426x6մմ պողպատե պատյանի տեղադրում PAM տեսակի մեկուսացումով	մ	3	ԳՕՍՍ 10704-91
12	Զոդակարերի ստուգում ֆիզիկական եղանակով	կար	2	
13	Պողպատյա պատյանի ծայրերի հերմետիկացում	պատ.	2	

Բաժ.պետ.	Ա.Վարդանյան			ՕԲՅԵՏ 16/017-15			
Գլխ.մասն.	Ժ.Վարդիկյան						
Նախագծեց	Մ. Շամիլյան			Տավուշի մարզի Խաչթառակ գյուղի հարակից տարածքով անցնող Բետոնիտի ԳԲԿ-ից Իջևանը սնող մ/ճ ա/գ գազատարի վթարային հատվածի վերատեղադրում			
				մ/ճ գազատար	Փուլ	Թերթ	Թերթեր
					ԱՆ	1	2
Պաշտոն	Ա.Ա.Հ.	Ստորագ		Աշխատանքների ծավալներ		«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ինժեներական կենտրոն» մասնաձյուղ	
			2016թ				

ՀՀ	Աշխատանքի անվանումը	Չափ. միավ.	Քանակ	Ծանոթ
14	Վերգետնյա գազատար խողովակի յուղաներկում 2 անգամ Գրունտ ԴՓ-02 Յուղաներկ	մ ² մ ²	113 113	ԳՕՍՍ 25129-82 ԳՕՍՍ 8292-85
15	Պողպատյա արմունկ 90° 325x8	հատ/կգ	12/528	
16	Պողպատյա անցում 820x426 426x10/325x8	հատ/կգ	2/240 2/52	ՏՊ 102-488-95 ԳՕՍՍ 17378-01
17	Առկա գազատարի ապամոնտաժում ժպ800 մմ	տեղ/մ	3/2	
18	Գազատարի փչամաքրում	մ	113	
19	Գազատարի փորձարկում	մ	113	

Փուլ	Թեր	Թերթեր	ՕԲՅԵԿՏ 16/017-15
ԱՆ	2	2	